Արձանագրություն N 3
ՀՀ ՈԿ ԳՀԾՁԲ-19/1 ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 17 մայիսի 2019թ
ժամը 15:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Մ. Մուրադյանը
անդամներ՝ Հ.Մարգարյանը, Գ.Ավետիսյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան
Մասնակցում էր՝ «Բագարանի Բարիք» ՓԲԸ -ի տնօրեն Ս. Մարգարյանը:

I. Մասնակիցների հետ գների նվազեցման բանակցություններ վարելու մասին

(Մ. Մուրադյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

Սահմանված ժամկետում և հրավերի պահանջների համաձայն առաջարկված գների նվազեցման վերաբերյալ բանակցությունների համար հրավիրված հանձնաժողովի նիստին ներկայացել էր «Բագարանի Բարիք» ՓԲԸ -ի տնօրեն Ս. Մարգարյանը:

2. Հանձնաժողովը քննարկեց և որոշեց գների նվազեցման բանակցությունների համար սահմանել 10 րոպե ժամանակահատված:

2.1 Բանակցությունների համար սահմանված ժամկետի ավարտին մասնակցի կողմից կատարվել է հետևյալ նոր գնային առաջարկը.

Ծառայության				*Մասնակցի անվանումը և նոր գնային ընդհանուր առաջարկը՝ ՀՀ դրամ)*	Նախահաշվային գինը (ՀՀ դրամ)
Չափաբ. համարը	Անվանումը	*Չափի միավորը*	*Քանակը*	«Բագարանի Բարիք» ՓԲԸ*	
1	2	3	4	5	6
4-րդ	«ՀՀ ոստիկանության կրթահամալիրի թիվ արևելյան հսկիչ անցակետի կառուցման աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայություն	դրամ	1	39500	54500

***Մասնակիցը ԱԱՀ վճարող չէ:**

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

II. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների ամփոփման մասին

(Մ. Մուրադյան)

3. Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները և ներկայացված գնային առաջարկները, որոշեց.

ա/ «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ին 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել՝ 2-րդ, 3-րդ, 6-րդ չափաբաժինների համար:

բ/ «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ին 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել 4-րդ, 7-րդ, չափաբաժինների համար:

գ/ «ՄԱՌՔ» ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել 1-ին, 5-րդ, 8-րդ չափաբաժինների համար:

դ/ հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ե/ փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստ հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը ժամը 14.15-ին ք. Երևան, Ծովակալ Իսակովի 29, «գնումների խումբ» աշխատասենյակ հասցեով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Մ. Մուրադյան

անդամներ՝ _____ Հ. Մարգարյան

_____ Գ.Ավետիսյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան